

Գրիգոր Ինչարեան

ՌԵՖԵՐԱԿԵՆՏԱԳՐՈՒՄԻՆ

(Արդարադատության գործը)
Վանաձոր քաղաք

1975

17530000 - ԼԻՏան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱՎԳՐՈՒԹԻՒՆ

Մնամ Լմ Այնթապ 19 Յունուար 1897-ին:

Նախակրթութիւնս - մանկապարտէզէն սկսեալ, ապա միջնակարգ ուսումս ստացած Լմ ծննդավայրիս Վարդանեան կրքարանին մէջ (1900-1912): Երկրորդական ուսումս առած Լմ կիլիկեան Ճեմարան (1912-1915) որ հիմնուեցաւ Այնթապ 1912-ին ընդ տեսչութեամբ Փրոֆ. Արմենակ Չամիչեանի:

Տեղահանութեան շորս տարիներուն (1915-1918) զբտնուած Լմ Համա եւ Սելիմիէ: Բախտաւոր եղայ որ 1916-ին կրցայ մտնել կառավարական հաստատութեանց մէջ (Երկրագործական Դրամատուն, Գաիմմադամի զբառնեակ եւ ապա Պարենաւորման Մթերանոց) որպէս զբաղիր-հաշուապահ, պաշտօններ որ զիս ազատ պահեցին զինուորազրուամէ (*): 1919-ին պաշտօնի կոչուեցայ Համա որպէս Ազգային Միութեան օգնական-քարտուղար, ապա անդլիապիներու հաստատած Որբանոց-Այրիանոցը: Նոյն տարուան աշնան ընտանեօք երբ վերադարձայ Այնթապ, հրաւիրուեցայ Եգիպտահայ Որբախնամ Ընկերութեան Այնթապի մէջ հաստատած Ազգային Որբախոցը, իրրեւ քարտուղար-ուսուցիչ, ընդ տեսչութեամբ Ղազարոս Ղալիկեանի:

Այնթապի ինքնապաշտպանութեան կալուին (1920) Ազգային միջնակարգ Մայիս եղայ օգնական-քարտուղար Ազգային Միութեան իսկ Մայիսի 25-ին երբ Ամերիկեան եւ Անգլիա-

* Սյս մասիմ տեսնել Օրագիրս, լոյս տեսած Յեղասպան Թուրքը Իատորիմ մէջ:





1920-ին, Այնթապէ ելփիս




1925-ին, Ճիւնի

կան Որբանոցները Այնթապէ պիտի արտահանուէին (պարենաւորումի բեռը թեթեւցնելու համար), Ալզալին Որբանոցի հետ եւ ալ բամբուկեայ ծննդալայրէս: Մօտ 3 ամիս մնացինք Պէյրութ (Քարանթինա) ընդհանուր սրբերուն հետ. ապա մեր Որբանոցը տեղափոխուեցաւ Ճիւնի ուր մնացի մինչև 1925-ի վախճանը: Այնթապի հաւաքական պարպումէն ետք (Դեկտ. 1922) քոյս եկան ծնողքս ու քոյրս, նաև երկու եղբայրներս (երրորդ եղբայրս, Նորայրը, Երուսաղէմ գացած էր):

Հայրս քահանայ էր. անունը՝ Գարեգին: Հայէպ հաստատուած ծուխերուն հրուէրով երբ սրտէց Հայէպ տեղափոխուիլ եւ ալ իրենց հետեւեցայ հրածարելով Ամերիկա երթալով ուսումն ըրացնելու փափաք-ծրայիրէս:

1926-ին հրաւիրուեցայ Կրքասիրաց վարժարան որ հիմնուած էր 1924-ին: Երեք տարի եղայ Առաջ-ուսուցիչ ընդ



1929. Կրթասիրացի բակը
(Զօգագ Արպախիսի քաղին մէջ)

տեսչութեամբ Գրիգոր Էրմէր-ձեանի: 1929-ին կոչուեցայ անօրէնութեան (Մտակոց, Մանկապարտեզ եւ Նախակրթարան՝ Աղջկանց ու Մանչերու բաժիններով) եւ մնացի 28 տարի (1929-1957): Աջ տշխո կրած décollement-ի գործադրութիւնը 1954-ին, տարիքս եւ Կրթական Տեսչութեան պարտադրանքը (քանի որ լիբանանագատակ էի) պատճառներ եղան որ բաժնուիմ Կրթասիրացէն եւ հաստատուիմ Լիբանան, ուր 1956-ին եկած էին արդէն կինս ու աղսս: Ես եկայ 1957-ին, տարի մը մնալով նոր տնօրէն Պր. Արմէն Տէր Պետրոսեանի հետ:



1933-ին. Հայկէպ



ԿՐԹԱՍԻՐԱՑ ՎԱՐԺ-Ի ՈՒՍՈՒՑՉՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ 1938-ԻՆ

Ա. շարք (նստած) ձախէն աջ.— Օր. Սիրանյշ Էլէյնեան, Տիկին Մարիամ Պրունըզեան, Գրիգոր Պողարեան, Օր. Անահիտ Ալեքսանեան, Տիկին Հռիփսիմէ Պէքեարեան:

Բ. շարք.— Օր. Մարիամ Տէյ Սարգիսեան, Օր. Զարուհի Պարսումեան, Օր. Նուարդ Ղազեյեան, Արմէն Տէր Պետրոսեան, Պենոն Գըլմեան, Օր. Ռոզա Արուքեան, Օր. Մարի Խորոզեան, Օր. Էլիզ Մարտոյեան:

Գ. շարք.— Օր. Վարդանյշ Վարդանեան, Կարապետ Սալունեան, Զովակիմ Պազգարեան, Սարգիս Պալպալանեան, Պետրոս Տէր Պետրոսեան, Գեշիք Պունոզ, Օր. Զարման Թիւրապեան:

Պէլյուսթ Էրբ հաստատուեցայ ուսուցչական-տեսչական պաշտօններ առաջարկուեցան, բայց մերժեցի: 1962-ին յանձն առի խմբադրութիւնը Հայ Անքէպ հայրենակցական Լոսանձոսի պարբերաթիւթիւն, որ թիւ 6-էն սկսեալ պիտի տպուէր Պէլյուսթ, փոխան Պոսթոնի: Առողջապէս քայքայուած, 1971-ին վախճանը խմբադրութիւնը փոխանցեցի Պր. Էր. Պապայեանի, թերթին անունն ալ եղաւ. Նոր Այնքապ:

Հիւանդանոցէ մահապարծ Էրած, 1970-ին Էրկիցս գալի Երեւան, 1920-ի Հերոսամարտին յիանամեակը հո՛ն տօ-



Յորեկեանիս տարին, 1950



1957-ին, Հալէպ
(Պէյրուք գաղթի տարիս)

ներու եւ նոր Այնթապ ասան մը ունենալու յետին ծրագրով որոնք յաջողութեամբ պրակուեցան :

Ստանուածքս եւ վարած պաշտօններս զիս շատ կանուխէն կապած են բնթերցասիրութեան եւ գրական-մշակութային ձեռնարկներու() : Ունեցած եմ ճօն դրադարան եւ ժողովական երկարամեայ կեանք : Հալէպի մէջ եղայ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին քարտուղար-հաշուապահ (1926-էն 1930), Ամերիկահայ Այնթապցիներու Խորհրդատու Մարմնոյն ատենադպիր-հաշուակալ (1929-1952), Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդին ատենադպիր-անդամ (1932-1935 եւ 1937-1949), անդամ Ազգ. Գաւառա-*

**) Բամախօտս քիւմնբով յամախ մասնակցած եմ յօրէինակամ ձեռնարկներու եւ մշակութային ընկերակցութիւններու սարքած դասախօսութեամբ :*



ԿՐԹԱՍԻՐԱՅ ՎԱՐԺ-Ի ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԿԱԶՄԸ 1955/6-ԻՆ

Նստած (ձախն աջ).— Պետրոս Տէր Պետրոսեան, Յովակիմ Պազգալեան, Գեղանոյշ Պողարեան, Գրիգոր Պողարեան, Օր. Սիրանոյշ Էլէյնեան, Տիկին Ազատի Ֆըսթըզեան:

Բ. շարք.— Օրիորդներ Անահիտ Գալեմֆեարեան, Վարդուխի Իսկենսերեան, Լուսին Առազլեան, Արաբոյի Գալեմֆեարեան, Պերճուհի Պետրեան, Սիրարփի Մանուկեան, Իվեր Այանա, Լէյլա Մուսալլի:

Գ. շարք.— Օր. Շուշան Պոյանեան, Օր. Ալիս Համասեան, Օր. Լուրեր Չալլագ. Նուպար Գալեմֆեարեան, Չալլագ Պետրոսեան, Մուգալֆար Խալիլի. Մարտիրոս Մարտիրոսեան:


Կան ժողովի (1944—1949), Նախագահը Կրթատիրոջ Վարժարանի Շրջն. Միութեան (1927—1948), Կրթատիրոջ Միութեան Մայր Դիւանի Ատենադպիր ապա Ատենապետ (1934—1956), Հիմնադիրներէն մէկը եւ վարչութեան ղանձապահը Հալիպաշայ Ուսուցչական Միութեան (1938, 1942—1957) նաեւ վարիչը մեր Գրաստան ուր կը մնար Եղբայրս Սաշիկ:

Եղած եմ զբաղած Վարդանեան Կրթարանի իսկ օչնական-զբաղած Կիլիկեան Ճեմարանի:



Սուրիահայ և Լիբանահայ Ուսուցչական Միութիւններու
 Համագումար, Անքիլիսա, 1966, ընդ նախագահութեամբ
 Էրջանկայիշատակ Գարեգին Կոթղ. Յովսէփեանցի :

*Որպէս խմբադիր հսկած եմ պաշտօնավարած մայրե-
 րուս մէջ յոյս բնծայուած ձեռագիր կամ խմորատիպ թեր-
 թերու (ձիւնի՝ Այգ, Հալէպ՝ Լոյս, Կեանք) իսկ պատաս-
 խանատու խմբադիրներէն էի Ուսուցչական Միութեան Բու-
 րատան Երկամսեային, տղայեր (1950-1957) : Վեթերան
 Անգամ Եղած եմ Հ. Բ. Բ. Մ.ին : Նոյն Միութեան Կրթա-
 կանին և Շրջանակայինին անդամակցած եմ Հալէպ, 1945-
 1949 և 1951-1955 տարիներուն : Հ. Բ. Բ. Մ. և Կրթատի-
 րաց գործակցարար Երեսնամեայ ուսուցչական կեանքիս Յո-
 րեկանը տօնեցին 1950-ին և հրատարակեցին 1929-1950-ի
 Հուսկ Բանձերս : 1970-ին պարզեւտարուեցայ Կիլիկիոյ
 Կաթողիկոսարանին Ս. Մեսրոպի շքանշանով, Ուսուցչաց
 Օրուան տօրիթով, ձեռամբ ՎԼՏ. Խորէն Կաթողիկոսի :*



Հ.Բ.Ր.Մ-ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋ. ՅԱՆՉՆԱԺՈՂ-ի 1955-ի ԿԱԶՄԸ

Նստած, ձախէն աջ.— Մարտիրոս Գունտազեան, Արմէն Մազուեան (Նախագահ), Արամ Մինասեան (Ատենագետ), Վազար Պետիկեան:

Ոտքի, ձախէն աջ.— Էմին Ֆերբէլեան, ՏԲ. Օսկար Զրեշտակեան (Փոխ Ատենագետ), Հրանդ Պարսումեան (Գանձապահ), Գրիգոր Պողարեան, Ժոզեֆ Դատարեան (Ատենագիր):

Անտիսկալ տկարութիւն մը ստեղծելու յեղաշրջեց կեանքիս ուղղութիւնը սը հիւանդութիւն ի՞նչ է չէր զիտցած: Արեանս մէջ սքրեք-ագոգոս մանրէն սողողած ըլլալով 1969-ի ձմեռը 80 օր մնացի հիւանդանոց, ազատելով մահուան ճիրանէն շնորհիւ ԲԺ. Խաչիկ Պարապանեանի հոգածու խնամքին եւ արդիական ղեղըրու: 1972-ի Յունուարին վերստին ինկայ հիւանդանոց, այս անգամ ջրգողութեան զարմանումին համար եւ երկրորդ անգամ փրկուեցայ կեանքիս դուռը ափ առնող մահէն:



Հայաստան, Մարդարապատ, 1970



1962-ին, Պէյրուք

1973-ին Պր. Վարդգէս Համադասեանի թեյադրանքին ընթացք տարւոյ Հայաստանի Գիտական Ակադեմիային նախընթացի մասննագարանիս նախասովետական շրջանի հրատարակութեան թիւները, մօտ 1800 պարբերութիւն, գիրք ու պրոքսիկ (բացի աւելի քան 200 պրոչիւրներէ եւ արխիւային նիւթերէ) իսկ սովետական շրջանի հրատարակութիւն 300 հարցիկա. ու պատմ. գրքերս ու գրքոյկներս այս տարի նրբերեցի Պէյրուքի Հ.Բ.Ը.Մ.ի Ե. Հիւսիսեան հիմնարկին:



Ամուսնացած եմ 1927-ին, Հայէպ, Գեղամոյշ Յ. Սաչա-տուրեանի հետ:



1944-ի Դեկտեմբերին սրգեղեցինք Նուպար եղբորս երկրորդ մանչը ծնած ժամէն, անունը՝ Գրիգորիս, որ նախակրթութիւնը առաւ Կրթասիրաց, Երկրորդական ուսումը՝ Յովակիմեան-Մանուկեան (Պէյրուշ) տպահատեւեցաւ՝ Ամերիկեան Համալսարան (A. U. B.) եւ տոքթորան կը ստանայ այս տարի (PH. D.) իբրեւ Փիզիոլոժիսք: Ամուսնացաւ 1971-ին Գեղուհի Խաչերեանի հետ եւ հայր է արդէն աղջնակի մը:

Ղազ
1778
8771



1973-ին սկսայ համադրել եւ խմբադրութեան յանձնել տպակ ու անտիպ գրութիւններէս մաս մը: Յարդ ըյս տեսան Յեղատպան Թուրքը (1973), Այնթապականի Ա. Հատորը (1974) եւ նոյն շարքի երկրորդ Հատորը, Մահարման Լնթախորտարով, 1975-ին: Մամուլի տակ է հինգերորդ դիրքը, նուիրուած Հայ Ուսուցչական Միութիւններու Պատմութեան: Եթէ Տէրը կամի անոր պիտի հետեւի Այնթապականիս Գ. Հատորը:



Շնչարգելութիւնը դիւ պարտադիր կը պահէ տուն: Փառք կու տամ Նախախնամութեան որ յիշողութիւնս ու ձեռքս չեն դաւաճաներ տակաւին: 1974-ի Նոյեմբերին ունեցայ երջանկութիւնը ներկայ ըլլալու Հալէպ, Կրթասիրացի նոր շէնքին բացման հանդիսութեան: Միակ տենչանքս է բաց աչօք եւ կիսաչէջ մտքով անդամ մըն ալ այցելել Երեւան եւ իջմիածին ու Նոր Այնթապէն յետին ողջոյնս տալ մեր ալեւիառ Մասիսին:

ԳՐ. ՊՈՂԱՐԵԱՆ

1 Յուլիս 1975, Պէյրութ



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0336890

[In. 804.]

ЦЕНА

№2

1778